Արձանագրություն N 5
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ գլյուկոմետրի թեստ-երիզների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան «07» «Մայիս» 2019թ.
ժամը 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Մ.Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ Մ.Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան
Բացակայում էր Ն.Թովմասյան

1. Տեխնիկական բնութագիրը շտկելու մասին

(Մ.Մխիթարյան)

Ի գիտություն ընդունել, որ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 2019 թվականի ապրիլի 16-ին ներկայացվել է բողոք, որի պահանջն էր՝ պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում:

Բողոքը քննող անձի կողմից 2019 թվականի մայիսի 3-ին կայացվել է որոշում (ուժի մեջ է մտել հրապարակման հաջորդող օրը, հրապարակվել է 06.05.19թ.), ըստ որի բողոք բավարարվել է մասնակի՝ տեխնիկական բնութագրի մասով բավարար գնահատելու մասին որոշումը: Մասնավորապես, անհամապատասխանությունը արձանագրվել է չափման միջակայքի մասով:

Առաջնորդվելով բողոքը քննող անձի կողմից կայացված վերոնշյալ որոշմամբ, **որոշվեց** «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին առաջարկել շտկել անհամապատասխանությունը՝ մինչև 2019 թվականի մայիսի 8-ը ժամը 18:00-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Մ.Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան